

ԲԱԺԱՆՈՐԴԱԴՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար
 սարեկան 12 ժր.
 վեցամսեայ 6 " "
 Արտասահմանի
 համար սարեկան 15 " "
 վեցամսեայ 8 " "
 Ամերիկայի համար
 սարեկան 3 ժր.
 վեցամսեայ 1.50 "

Մանուգրան սողջ առաջին երեսին համար 40 ս. իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ. երեսին աւելի անգամներու համար 20 0/0 գնդ կըլայ :

Վառնայի համար
 ձեռքի 10 սանթիմ

ՇԱՐՔՆԱԲԻ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՒԻՆ. ՔԱՂՈՒՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹ ԶՈՐԵՔՆԱԲԻ ԵՒ ՇԱՐՔՆԱԲԻ ՕՐԵՐԸ

Նախկին և նորագործ
 խմբագրութեան հաս. ցեխ

Редакция на вѣстникъ
 „Шаржунъ“
 Варна

Redaction du journal
 „Charoun“
 (Bulgarie) Yarna

Պուշկարիոյ համար
 ձեռքի 15 ՍԱՆԹԻՄ

Արտասահմանի համար
 ձեռքի 20 ՍԱՆԹԻՄ

Գրութիւնք և ցեխ
 արտիք

ՇԱՐՔՆԱԲԻ Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵՒԻՆԸ ՊԵՏՐ ՎԱՐՔՆԱԲԻ

ՀԵՐՈՍԻՆ ԿՏԱԿԸ

ԿԱՐԱՊԵՏ ՏՕՂՐԱՄԱՃԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Հոն, երկնահուպ, վեհ լեռներու զագաթին՝
 Խոնջ, վերաւոր ինկաւ կրկին մի հերոս,
 Որուն ծակուած կուրծքէն ժայթի յորդահոս
 Դեռ եռացող իր արիւնը թանկագին :

Նա վեր առաւ իր գլուխը հերարձակ՝
 Փունջ փունջ մագեր ճակտին վրայ ցանուցեր
 Եւ շրթունքին ժրպիտը մի՛շտ յուսալիր՝
 Ուղղեց հեռուն իր նայուածքը համարձակ :

Եւ մըխացող իր վերջին մէջ մահարեր՝
 Թախտեց ծայրը իր դաշտին երկայրի,
 Ու ծունկ չոքած մտը այդ մուրձ քարայրի՝
 Գրեց այսպէս—այդ իր վերջին կրտակն էր :

«Մընաք բարո՛վ, լեռներ, դաշտեր ձիւնապատ,
 Ու դուն քարայր, պատսպարան իմ վերջին,
 Դեռ մի բոպէ՛ եւ լոկ փոշի մը չնչին
 Պիտի մընայ ձեր այս զաւկէն հարագատ »

«Մերեցի ձեզ եւ եկայ ասար վայրերէն՝
 Զէնքը ձեռքիս բռնութեան դէմ անողքը,
 Պաշտպանելու արդարութեան սուրբ բողոքը,
 Որ նա լըսուի աշխարհի շորս ծայրերէն »

«Եւ գիմեցի դէպի մահ՝ անվեհեր
 Կուրծք դէմ տալով սեւ վտոգրի կապարի,
 Եւ կը մեռնիմ բայց մեր ուխտը թող ապրի,
 Թող մեր գործը շարունակեն ուրիշներ »

Ու թնդացին սարը, ձորը միասին,
 Եւ մորենեց սառ մորթիկը լեռներուն
 Տանելով իր հետը հեռուն ու հեռուն
 Գոյժը մահուան եւ կըտակը հերոսին :

22 Յունուար 1905

ՎԷՏԱ

ԽՈՇՈՐ ՎԵՐՔԵՐ

Երկու տարի առաջ, մի անկախ բնաւորութեամբ շշուկներով հալածված և զըջվելով գործից քաշված գործիչ գրում էր — այս տեսակ միջնորդում և պայմաններում գործել անկարելի է. անկարելի է և գրութիւնը փոխել. ինչպէս երեւում է ժողովուրդը գեռ չէ հասունացել, որ շատ սովորական մարդիկ կարողանում են գիմանալ իրենց պատահաբար գրած գիրքերում և ամէն ինչ կենտրոնացնում իրենց ձեռքում :

Մի ուրիշ երիտասարդ, գործելու տրամադիր և շատ ընդունակ ու լուրջ մարդ, որ մի քանի փորձեր էր արել մի քանի ընկերներով միասին լուրջ գործունէութեան հող ստեղծել, կրկին հիասթափված ասում էր. «անկարելի է. ոչինչ չէ կարելի փոխել. բոլոր ճիգերը զուր են. ես բացարձակ վրդովվում եմ, շատ անգամ ուզում եմ հրապարակով խօսել, բայց վարանում եմ ի պէտք չէ որ ժողովուրդը չէ կարողանում խոշոր մասով փորել գործին. բնագոյով զգում է թէ գործին գլուխը կանգնող մարդիկ ասանկ գործ մը վարե-

լու դերին մէջ չեն. կարելի է որ ես ալ վարանոտ ըլլալուս պատճառով է որ չեմ կրնար ամբողջովին նետուիլ գործին մէջ, բայց փորձեր ըրի, ուսումնասիրեցի և պատճառ մը, մղիչ փաստ մը չը տեսայ որ վարանոտութիւնս գունէ կարճ ժամանակով ոչնչացնէր և զիս նետել տար գործին մէջ :

Ոչ մէկ ժողով օգուտ չունի. գործը որոշ սխառեմի մը դրոշմած է. այդ սխառեմը փոխելու համար շատ բան պէտք է, որ մեզիկը պակսի »

Ու զա էլ մեկուսացաւ. այլեւս բոլորովին սկեպտիկաբար վերաբերվելով դէպի գործ, գէպի ամէն մի ժողով. Այս պարուններին մին ուստահայ էր, մին տաճկահայ. Մին կեանքի և գործի մէջ բաւական եփված մարդ և բարձրագոյն կրթութիւնով. միւսը թարմ երիտասարդ, յեղափոխութեան շերտ պաշտպան ու համակիր, ռէակտիւնի դէմ քաջամարտիկ տրամաբան կուրդ, ու երկուսն էլ միեւնոյն եզրակացութեան էին հասել :

Սա մի վերջ է. մի խոշոր վերջ մեր յեղափոխական գործունէութեան ասպարէզում. քաջվում է և հասուն, գործելու համար ամէն կերպ պատրաստված մարդը, քաջ վում է և նոր սերնդի եռանդուն ու խելքը գլխին ներկայացուցիչը. Երկուսն էլ միեւնոյն պատճառաբանութիւններով, տարբեր երկրի և միջավայրի մարդիկ, նոյն իսկ տարբեր նկարագրով :

Ու քաջվողները ասպարէզի վերա մնացողներին ստանում են «վարանոտ, թուլահոգի, ոչ անկեղծ» տիտղոսներ, որպէս զի այդ քաջվողների պատճառաբանութիւնները եթէ լսվեն այսինչ կամ այնինչ շրջանակներում, կորցնեն իրենց ազդեցութիւնը և ստեղծված կացութիւնը գուրս չը գայ սովորական վիճակից, ստեղծված հեղինակութիւնները, որքան էլ որ նրանք անհիմն լինեն, չը զգկվեն իրենց հմայքից ոչխարների, կարճամիտների.

րէ, անփորձների, գործի աստան ու երեսը չը ճանաչողների աչքում :

Անցեալ օր մի պարուն ինչ գրում է. «այս օրեր մարդու մը հանդիպեցայ, սմբոխի պարզ զաւակ մը, շափէն աւելի եռանդոտ, մեծախոս. այդ մարդը Դաշնակցութեան բարձր մարմիններէն միոյն հետ մտիկ կապերով կապված է. Ուղղակի յարաբերութիւններ կը պահպանէ. ու կը սուցնէ ալ, շափէն աւելի ինքզինքը շատ վերին կը նեճէ դաշնակցական մեծ մարդոց հետ բարեկամ է և մեծ պաշտօններ յանձնած է եղեր իրեն. կը գար մանամ... Հնչակեաները կը ծագրէիք դաշնակցականներդ, որ մեծ գործեր շատ պղտիկ մարդոց կը յանձնեն. դուք աս ի՞նչ կնէք : Կարծեմ դուք ալ կը ճանաք այդ մարդը. դուք այդ շափ ազդեցութիւն չունի՞ք. օր կարենաք սա մարդոց ասանկ փափուկ և պատասխանատու գործերու մօտեցնել չի տալ : Լեզուին տակ ձեր դէմ ալ բաներ մը կային, բայց իմ քովս այնքան չը բացուեցաւ : Վարդօն ի՞նչ է կըսէր, աւելի խոշոր մարդեր կան, հիմա մեզի պէս երիտասարդներու գործելուն ժամանակն է : Վարդօն իր ընելիքը ըրաւ. Լկարչ կտրած կը դիտէի այդ խեղճը. իրեն վրայ չէի խղճար, այլ անոնց, որոնք անչուշտ իր նոր կամ հին մեծ մարդերն են որ այդպիսի մեկու մը խոշոր, պատասխանատու գործեր կուտան և ձեզիպէսները ատանկներուն բերնին ծամոն կընեն : Վայ մեզի. ասանկ կը յառաջագիմնեք. ի հարկ է շատ կը փափաքէի որ մեր յեղափոխութիւնը այնքան խոշոր դէմքեր ունենար, որ Վարդօնները անոնց քով զերօյի մը արժէքը չունենային, ատով գործը առաջ կերթար միայն և Վարդօններն ալ իրենց արժանիքը իրենց մատուցած ծառայութեան և գործույ-

նէութեան շարժումը կր պահպանէ- ին . Բայց կը վստիմ թէ իրողու- թիւնը այդպէս չըլլայ . և մենք քիչ թէ շատ փորձառուններէն ալ զրկուինք . ուստի մենք կը փափաքինք որ ամեն յեղա- փոխական արժանաւորութիւններով մարդիկ դաշնակցութեան դրօշի տակ հաւաքուին . աստին մեր մէջ կան մարդիկ որոնք կամ ի- րենք կը չլզոքանան . չէզոքա- նալու քայլեր կառնեն . կամ թէ նոյն բանակի մարդիկ կաշխա- տին չէզոքացնել . իրենց գոր- ծիչները Ասոր ծայրը ուր պիտի հասնին .

Նամակագրի յիշած պարոնին ես չեմ ճանաչում . իմ ձեռ- քում չէ նրան . գործ չը յանձնելիք . մանաւանդ հիմա , որ ես դաշնակցական ոչ մի մարմնի մէջ չեմ գտնուում . Այս յայտա- րարութիւնը անում եմ . ազատ մնալու համար զանազան դիմում- ներից որոնք ուղղուում են ինձ այս և այն խնդրի կամ անհատի առթիւ .

Երաւ արաւ եմ որ դաշնակցու- թեան մէջ ինձնից խոչոր մարդիկ կան . գրանով միայն գործը կ'օգտուի . իսկ ես ոչ մի վնաս չեմ կրիք . Չէզոքանալու գործից ի- հարկէ , երբէք արժանաւոր չեմ , որչափ էլ երիտասարդները շատս նսն ոչ էլ նրանցից մէկն եմ որ սրտ կրա ճիշտով կարող է գիւ- րին կերպով չէզոքանալ .

Մերացած էլ չեմ , փառք Աս- տուծու . տարիքս քառասուն չըկայ , գաղտնիութիւնս միայն չէ որոշ-

ված կաղապարի համաձայն , առող- յութիւնս երկաթէ է . եթէ Դաշ- նակցութեան մէջ ձերք փնտառ- լու ինչինք թէ եռանդով , թէ տա- րիքով թէ մտքով շատ ձերքը կան . իսկ երիտասարդ կոչված- ների մէջ թերեւս աւելի շատ .

Առողջական և հասակի ինձ ան- ձամբ վկայական տալ ստիպվեցի նրա համար , որ զանազան տեղե- րից այդ տեսակ լուրեր են հաս- նում ականջիս . ինչպէս երեւում է դա էլ չէզոքացնելու անհեթե- քի և նպատակին չը հասնող մի- ջոցներից մին է իմ դէմ , որ ան մեն մի տեսակ լուրով այսինչ կամ այնինչ պարոնից , տարածել է ճգնում .

Մի ժամանակ կովկասեան գոր- ծիչներին մի որոշ բանակում ի- րենց ամբողջովին չեմ թարկվող անհատներին . կամ հոգեկան հիւ- անդ էին հոչակում , կամ ապուժ- էին ողբալով . մի քանիսն Արգ- ևո՞ք ալը ախար կովկասից արտա- սահման էլ անցաւ ,

ՋԱՐԴՈ

ԳԱՊՈՆԻ ՆԱՍԱԿԸ

Պերտերբուրգի վերջին շարժման յայտնի դեկալար . Գորգի Գապօնի՝ նախկին քահանայ , ողբարկել է մեզ հետեւեալ նամակը . «Դրոյակի մէջ հրատարակելու համար , որը եւ շտա- պում ենք կատարել մեծ սիրով , խո- րապէս համաձայն նրա բովանդակու- թեան եւ համակիր նրա կոչին :

Յունարեան արիւնահեղ օրե- րը Պետերբուրգում և մնացած

Ռուսաստանում՝ զէմ առ զէմ՝ կանգնեցրին ճնշած բանուորա- կան դասակարգը և միահեծան- րէթիմը՝ որի գլուխն է արիւնար- բու Յարը . Ռուսական մեծ յեղա- փոխութիւնը սկսեց . Բոլոր նը- րանք , որոնց համար իսկապէս թանկ է ժողովրդական ազատու- թիւնը , պիտի յաղթեն կամ պի- տի մեռնեն . Գիտակից պատմա- կան արդի մտէնտի կարեւորու- թեան , լինելով իրերի այժմ- եան դրոշմեան մէջ , ամենից առաջ՝ յեղափոխական և գործի- մարդ , ես հրաւիրեմ կարգում Ռուսաստանի սօցիալիստական բոլոր կուսակցութիւններին՝ ան- միջպէս յարաբերութեան մէջ մտնել միմեանց հետ և ձեռնար- կել զինւած ապստամբութեան գործին՝ բնդդէմ ցարիզմի . Ա- մէն մի կուսակցութիւն պէտք է սպառազինի իր բոլոր ուժերը . Ռազմային գործնական յատակա- գիծը բոլորի համար ընդհանուր պէտք է լինի . Ռուսը և տինաչ միտ , տէնօր՝ անհատական և խե- րային . Մերձաւոր նպատակը՝ միապետութեան տապալում եւ ժամանակաւոր յեղափոխական կառավարութիւն , որը անմիջա- պէս ներում կը յայտարարէ քա- ղաքական և կրօնական ազատու- թեան բոլոր մարանչողներին , իսկոյն և եթ կը զինէ ժողովուր- դը և կը զուժարէ հիմնադրական ժողով՝ ընդհանուր , հաւասար , գաղտնի և ընտրողական ձայնա- տրութեամբ .

Դէպի՞ գործ , ընկերներ . Յա- ղաքական և կրօնական ազատու- թեան բոլոր մարանչողներին , իսկոյն և եթ կը զինէ ժողովուր- դը և կը զուժարէ հիմնադրական ժողով՝ ընդհանուր , հաւասար , գաղտնի և ընտրողական ձայնա- տրութեամբ .

ու՞մ , դէպի կոնա . Կրկիննք Պե- տերբուրգի բանուորները յունաւոր Յի նշանաբանը՝ ազատութիւն կամ մահ . Ներկայ թուականներն՝ ամէն մի ձգձգում և շփոթանք՝ ոճիր է այն ժողովրդի հանդէպ , որի շահերն էք պաշտպանում դուք . Ներքելով իմ բոլոր ուժե- րը այն ժողովրդի գործին , որի ծոցից ես ինքս դուրս եմ եկել (գիւղացու որդի) , անդարձաբե- կապելով իմ փրճակը այն պայ- քարի հետ , որ մղում է բանւոր դասակարգը ճնշողների և հարս- տահարողների դէմ . ես բնակա- նաբար իմ ամբողջ սրտով և հո- գով կը լինեմ նրանց շարքե- րում որոնք կը զբաղեն բրտե- տարիատր և աշխատաւոր ամբողջ մասսան կապիտալիստական ճըն- չումից և քաղաքական ստրկու- թիւնից ազատելու իրական գոր- ծով .

ԴՈՐԳԻ ԳԱՊՈՆ ԿՅՈՅԱԿՈՆ ԳԵՄԵՐ . 1906

ԱՆԱՏՈՒ ԾՐԱԿՆՍ ԵՒ ԾԱՐԸ
—o—
Պարիզ , 10 փետրարի
Յունվարի 27-ին Տիֆլիս սրահում գումարւած 5000 բաղմութեան առաջ հռչակաւոր գրող Անասու Յրանս արտասանեց մի ճառ , որից քաղում ենք հետեւեալ կտորը .
«Ձեր պէտք է պատմեմ ձեզ , թէ ինչպէս ցարը հրամայեց կոտորել մարդկանց , որոնք յանցաւոր էին միայն նրանով , որ սովից ու թշուա- ռութիւնից հիշուած , յուսահատու- թեան մէջ զինել էին նրան , որպէս

Ա. ԱՄՅԻՏԵԱՏՐՈՎ

ՎԻԿՏՈՐԻԱ ՊԱՎԼՈՎ Ա

(Տօնախմբութիւն)

Վրացի յիշողութիւններ . Ամրան արկածներ քառական սպորտիստիկ հա- ստակութեան մեջ)

Գրող . Կոնստանտին

(Շար . նախորդ թիւին)

—Ես , իմ սիրելի Ալեքսանդր վա- լէնկանովիչ , շարունակեց Վիկտօ- րիան , վաճառականական հիմնարկու- թեան մէջ եղել եմ գրադիր , ծառա- յել եմ գրամատան մէջ , խմբագրու- թեան , երկաթուղու վարչութեան , ամէն տեղ էլ լաւ էի ծառայում , պաշ- տօնիս մէջ ոչ մի թերացում . . . բայց ամեն տեղ մի տեղ շատ մի տեղ քիչ , զարմանում էին թէ ինչի՞ ես գե- ղեցեալսիս , ծառայում եմ , Վիկ- տօրիանի պէտք է սիրուէի դառնալ , կանքերով ման գալ . բայց ոչ թէ բիւ- րօյի աղջիկ կորանալ :

—Իման իմանիչ , տօներին մենք նը- ւէր կրտսանանք . հարցնում է հաշ- ւապահին իմ ընկերուհի Ազնէսան . տասն անգամ ինձնից անելի խելացի եւ օգտակար . բայց մի զօրաղղու- թիւն ունի , այն՝ որ ակտաները սե- ւաղած են . — Ձը գիտեմ , չոր-չոր պա- տախանում է իմ ձեռքիս և զարգե- րէց շնչում են ընկերուհիները ձեռք կանէ . դուք սիրուէի էք . — Իման ի- վանիչ , հարցնում եմ ես , նւէր պէտք է լինի՞ . Հաշւապահը մեզից անուշ եւ կարկանդակից կակուզ պա- տախանում է . — դուք՝ Վիկտօրիա Պավլովնա անպատճառ կրտսանաք . ասացէք խնդրեմ , չէ որ դուք մեր պարծանքն էք . ինքը անօրէնը երեկ հետաքրքրվեց հարցնելով , — ինչպէ՞ս է այն նրբաճաշակ օրթորդի առողջու- թիւնը , որը ելքի տեսարակն է պա- հում . . .

Կանացի աշխատանք . Աստուած իմ , ես սշխատել եմ եզան նման , օրը 12 ժամ . . . եւ ամսական յիսուն բուրջուց անելի ստանալ չը կարողացայ . Երբ ես դժգոհում էի թէ քիչ եմ ստանում , աչքերը շուռւմ եւ պատասխանում է- ին , — ի՞նչ էք ասում . ձեր ստացածը այր մարդու ամսական է . մեզնում այր մարդիկ են այդչափ ստանում , Բայց բաւական էր որ ես ծառայել գայրէի , եւ սկսէի ժպտել ու նա- զանքներ անել , ինչպէս պահանջում է կնոջից բնութիւնը . Սէզամը բաց .

վում էր : Դրանի պէտք ունի՞ք փոխ վերցրէք : Սարսափելի է . պապաս- իսանում էի , ոտնկիցս շատ շատ վար կը զնէ՞ք : Չեզնից՝ Վիկտօրիան Պավլովնա . էհ փոխառութիւնը ինչ է , ես պատարատ եմ ձեզ հարաշարի ձերով կառք . բնակարան եւ երեք հազար ռուպլի . . . — Կերիք է յիմարու- թիւններ անել՝ ընդհանում էի ետ , անելի լաւ է անձիկս անելցրէք չեմ որ ես երկու հոգու փոխարէն եմ արձ- խատում . — Այդ չեմ կարող ամառ , սկզբունքով , այր մարդիկ են այդ- չափ ստանում . . . լինում էր պատաս- խանք :

—Բայց նրանք ստանում են 5 ժամվան համար , այն էլ թերի այ- խատելով , իսկ մենք օրական 12 ժամ ենք աշխատում . — Ձեմ կարող , հա , հա , հա , բայց նրանք այր մարդիկ են . Ու անա աղաղակ . քաղի որ դու կին ես , զբաղվում ես այր մարդի գործով , միշտ գինդ սեւ գրոշ է , թէ կուզ ասորական Շամիրամը եղիւր կին ես , զբաղվիր կնոջ վայել գործով . կարող ես լողալ ոսկու մէջ , փայլել աղամաններում , ունենալ բազմաթիւ հրաշարի ձիեր , Իսկ նը- րանք կարծիքով կնոջ գործը միայն պոռնկութիւնն է . Ու յուզված իմ ձեռքս բռնեց .

—Ասացէք խնդրեմ եմ իրաւացի չեմ . Միթէ հէնց այն իման իմանի չի , որը Ազնէսին պատասխանել չէ զիջանում , իմ առջեւ ծառայելու

մէջ չի զգացվում պոռնկութեան պիկորը : Այսինքն Ազնէսին թէեւ խելացի , աշխատող բայց աշխատչի հարար անպէտք է . ուրեմն , թող եւ մէջ չը մտնի . իսկ սա պէտք կը զայ ուրեմն եւ հեք կը խօսեմք ձեռք կանա- յի աշխատանք . էհ , պարոն այր մարդիկ , չը գիտեմ թէ ձեզնից որը աւելի վատ է . կաշխատի աշխատանքի պաշտպանութեամբ կաշխատակործներդ : Որոհեաեւ եք չիշում եմ մի ինձինների օր ինձ օգտուեմ . Եր հետեւեալ խօս- քերով . — Ինչո՞ւ էք փշուցնում ձեր գեղեցիկ աչքերը , մեր յիմար գրու- թեանց առանցների վրա . անելի լաւ գնանք արտասահման , ես մեզ հրաշարի հարուստներ կը հարցնեմ եւ հազար ռուպլի ամսական գնգա- սեղներ կը վճարեմ :

Յիշում եմ նաեւ մի յատակադիմա- կան ինքի խմբագրին , որ սեղանում էր ձեռքս , ոգեւորված նայում այ- քերին մէջ , եւ արտասանում . — օր չափ լաւ է որ դուք այդչափ գեղե- ցիկ էք . ուրախ , խելացի ու աշ- խատուէր : Անհրաժեշտ է մտածել հնար գտնելու որ դուք լաւ ապրէք . Ազնիւ աշխատեք , դրանից ինչ լաւ բարձր բան կայ . բայց գիտէք սրբո- քագրութիւնները , իմարդ ամսութիւն- աները . — արտագրութիւնը , նոյն իսկ հեղինակելու . . . այդ բոլորը շատ ողոր- մելի բաներ են սիրելիս : Ուրեմն ինչ պէտք է անել կը մտածենք . . . Եւ մենք մտածում էինք . Ու միշտ վտա-

իրենց հորը, նրանց որդիական ազեր-
անքներին ու արտասուքներին նա
պատասխանեց իր կողմից իր նախա-
կաներով եւ զինուորների զննակնե-
րով Այդ գնդակները դիպան իր սե-
փական լուսանկարին Այդպիսով
հակառակ իր կամքի՝ ցարը սպա-
նեց ցարին, սպանեց ցա-
րի գործը Այն արիւնից, որ կարմ-
րեցրեց նեվայի ստոյնը, դուրս կը-
գան միլիոնաւորներ, որոնք կը հա-
նեն ընկածները վրէժը Սարը սպա-
նեց ցարին, ցարը յարուցեց յեղափո-
խութիւն, որը կը կրանէ ցարի գործը
նիկողայ Ալեքսանդրովիչ այլեւս գո-
յաւթիւն շունի եւ նրա յիշատակը
յաւիտեան մատուցած է ամբողջ աշ-
խարհի նզովքին»

«Գրոշակ»

ՌՈՒՍԱԿԱՆ ՏԱԳՆԱԳՐ

«Էջօ աը Բարին» Թերթը կը հա-
զորդէ հետեւեալը.

«Մտքերը զբաղեցնող խնդիրն է
«Ձեռնակի Համագումարը» կը կարծուի
որ Ուիլիսն հակառակ խորհուրդ տուած
է ցարին, ըսելով որ կը բաւէ միայն
պատասխանատու նախարարութիւն
հիմնել: Կարելի է որ Ուիլիսն այդ
միջամտութիւնը արգելք ըլլայ հա-
մագումարին:

«Ըր Մաթէն» կը հազորդէ որ բազ-
մաթիւ սպանական նամակներու հե-
տեւանքով որոնք ցարին ուղղուած
են, Սարսքոյի Ալեքսանդրովիչին
վրէժակի մէջ գրուած է:

Գաղտնի ոստիկանութեան պետը
հրամաններ տուած է որ ամենալուրջ
միջոցներ ձեռք առնուին կայսերական
տունը պաշտպանելու համար:

«Մայիզ» կը հազորդէ, Մեծ իշխան
Ալեքսանդրովիչին սպանութիւնը այնքան մեծ
սարսափ ազդած է բարձրագոյն զինք

ուենցող անձերուն վրայ, որ զէպքը
կայացած օրէն ոչ ոք համարձակած է
սուղնէն դուրս ելլալ: Դուրս ելլող-
ներուն մէջ կը գտնուին իշխան Ա-
լեքսի, Վլադիմիր, Ինչպէս եւ Մայր
կայսրուհին: Մեծ իշխաններու անձ-
նական կառավարներուն պատուիր-
ուած է չը կրել իրենց պաշտօնական
նշանազգեստները:

Գանի մը օր առաջ մէջէն թրէ-
փովի թողաւթեամբ Բեթերպուրկի
ուսանողները, մտ երեք հազար հոգի
ժողով ունեցեր են համալսարանին
մէջ, ժողովին մէջ յեղափոխական ճա-
ռեր արտասանուեր են: Երգեր երգ-
ւեր են եւ ցարին մեծագիւր պատկերը
պատառ պատառ բերեր են: Այդ մեծ
ժողովը որոշեր է որ ցարի գործը ան-
պայման պիտի ինչայ: Ուրիշ կերպ
անկարելի է. ու իրենք մինչ գալ ա-
շուն համալսարան չը պիտի յաճախեն:

Փրագէտ Գորկիչ, 4000 բուրջու ե-
րախաւորութեամբ ազատ արձակուած
է եւ Բեթերպուրկէն չը պիտի հեռա-
նայ մինչեւ որ իր գործը քննուի ու
դատու տեսնուի:

ՉԱՐ, ԳՈՒՇԱԿ ԼՈՒՐԵՐ ԿՈՎԿԱՅԷՆ

Գանի մը օրէ իվիր հեռագրական
գործակալութիւններէն կիմանանք թէ
Կովկասի Պաքու եւ Պաթում քաղաք-
ներու մէջ հայերն ու մանկական-
ները իրարու հետ կռուի բռնուած են
զէնքերով, ու երկու կողմէն ալ բա-
ւական թուով սպանուածներ կան
եւ կառավարութիւնը չի կրնար կար-
գը վերահաստատել: Այդ երկու տար-
րերուն իրարու դէմ այդչափ կատա-
զօրէն բորբոքուելու պատճառները
չեն մասնանշուիր, մուկին մէջ կը
մնան, ու մարդ կը փորձուի կամայ
ակամայ կասկածիլ թէ ոուս կառա-
վարութիւնը յաջողած է իր վաղեմի

փայտայած ծրագրին մէջ, այսինքն
մահմտականները գրգռելով եւ քա-
ջարեղով հայերու վրայ յարձակել
տալ, ինչպէս փորձեց Շուշիի, Գան-
ձակի, Երեւանի մէջ:

Ինչպէս այն վայրերուն մէջ ուր
հայերը եթէ ոչ մեծամասնութիւն
գտնէ հաւասար են թուով մահմտա-
կաններուն: Վերջիններս չը պիտի
կարենան մեծ վնաս մը հասցնել հա-
յերուն, եթէ ինչպէս ոուս կառա-
վարութիւնը պաշտպան չ'անդիտանայ
թուրքերուն ինչպէս տանիկ կառավա-
րութիւնը կընէ հանդէպ քրտներուն
եւ թուրք ամբողջի:

Կովկասի յեղափոխական տարրին
վրայ հրամայողական պարտականու-
թիւն կ'իշխայ ամեն ճիգ թափել վերջ
տալ այդ ցեղային ատելութիւննե-
րուն նախ խաղաղ կերպով, հապա,
եթէ այդ միջոցները իրենց նպատա-
կին չը հասնին բռնի եւ լուս կազ-
մակերպուած ուժով սանձահարել
վայրի ու տգէտ թուրք ամբողջը:
որպէսզի ան այլեւս չը փորձուի այդ
պիտի յանդուգն քայլեր ընել հայ
տարրին դէմ:

Մենք համոզուած ենք թէ ոուս
վարչութիւնը մեծ հրճուանքի մէջ է
այս երեւոյթի պատճառով որն ստեղ-
ծելու համար ինքը շատ ճիգեր թա-
փած է, ու պիտի շարտար հնար ե-
ղածի շահէն աւելի օգտուի կովկասի
հայ բնակչութիւնը ճնշելու համար: Եւ
սոր անշուշտ համոզուած է նաեւ
Կովկասի յեղափոխական տարրը, Այդ
համոզումը ունենալէն վերջը կը մնայ
ընթացի խորհելով միջոցներ ձեռք առ-
նել զիստագրուելու այդ մեծ վտանգին,
կառավարութեան դիւալին ծրագրերը
չուրը նետելու համար:

Ցում էինք մասնաւորապէս անհետ
կուս: Եւ մեր նախանշաբը, ճաշերը,
ընթրիքները, որոնք համեմատ էին
մեր մասնաւորները, ի հարկէ աւելի
շատ էին արժուածք քան մի քանի սուր-
բազրիչ արտագրողի, թարգմանողի
տարեկանները: Ան այդ ամենը
վերջացու աշնպէս, ինչպէս ինժինե-
րինք... Հեռանանք այստեղից... եւ
ցրա փոխարէն թալանեցէք ինձ որ-
չափ ձեր փաթեթը ընդունակ են թէ
վերը, թէ վարը ամենքդ էլ մէկ Ձեզ
բողոքի պարոններ աշխատող զինքնէ
պէտք, այլ պոռնիկը: Վիկտորիայի
աշնքը կրակում էին մոռայարար: Նա
ըզայնորէն կոտորուած էր ծառի ճիւղը
եւ սոււււ... զերասանուհիներին յիշե-
ցիք: Ողտաւետ աշխատանք է: Ճիշտ
է նրանց հազարներ էք վճարում:

Բայց ինչո՞ւ են վճարում այդ ամ-
սականները—ինչո՞ւ են աւելացնում
նրանց ոստիկան: Եւ կը ցանկայի տես-
նել այն դերասանուհու խնդրագիրը
որը յենված իր ստղանդի վրա, ոտ-
նիկի յաւելում է խնդրում:

Այդպէս խնդրում են դերասանները
եւ վրայն դերասանների այդ սեսակ
խնդիրներն են յարգվում:

Իսկ դերասանուհին ուրիշ կերպ
պէտք է խնդրէ.— ինձ զարդի համար
ուէք. այսինքն մարմինս զարդարե-
լու համար, որովհետեւ ամենից ա-
ռաջ զուք պահանջում էք որ մեր
մարմինը հրատարակէ, զիւթիչ վնի,
տաղանդը երկրորդական տեղ է բըռ-

նում: Եւ էք զարդարի համար, որով-
հետեւ զուք գեղարեստի կեղծաւոր-
ներ, առանց զարդարանքի ինձ թա-
րոնում չէք պահի:

—Այնպէս որ եթէ զուք զարդարի
համար սոճիկա շահեցնէք կամ պար-
տաւորված պէտք է լինեմ բեմը թող-
նելու, կամ թէ ապրուստիս համար
նշանակված գրամը ծախուել զարդարիս
համար, իսկ ապրուստիս համար որ
տեղից գտնեմ... կարելի է որ մէկը
օգնութեան հասնի: Ուրեմն սասցէք
խնդրեմ միթէ առաջին դերեր կա-
տարող դերասանուհին տարեկան
չորս հինգ հազար բուրի ստանալով
պարտաւորված չը պէտք է լինի սը-
րա նրա սիրուհին դառնալ: Ոտոր
գումար է, սակայն հազիւ զարդա-
րանքի բաւէ. սրանից եւ եղբա-
կացվում է որ առանց պահող ամուս-
նու կամ սիրելիների դերասանուհին
անկարող է ապրել. իսկ եթէ ճար-
պիկութեամբ ապրում է այդ գումար-
ով, նշանակում է այնքան վատ է
այդ կեանքը որ թէ զինքը եւ թէ
սուրբ պեղարուեստն է անիծում:

Նէզինան իրաւունք ունի որ Մէ
լուրովի հետ անօթութեան չը գնաց.
այլ վերկատովի հետ գիւղը... նրա
տենք:

Մենք նստեցինք հին ծոմակած
նստարանի վրայ, իւրուր բարդիներ
տակ, որոնք զարթօրէն փարփում
էին արեւի տակ իրենց արծա-
թափայլ սպարթներով:

—Ներեցէք ինձ, որ ես այսչափ
յղայնօրէն խօսեցի, շարունակեց
Վիկտորիան. բայց այլ կերպ չեմ կա-
րող... այդ ամէնը ես անձամբ ապ-
րել եմ, ամենի փոխարէն սեփական
արիւնով վճարել: Ինչ անես, իմ
կարծիքով, ներկայումս կ'ընդ առնե
երեք ճամբայ կայ, կամ հին ժամա-
նակների նման նա կին եւ մայր
պէտք է լինի, որ շատ քարճր ու
ազնիւ է. բայց շատերի համար ձանձ-
րալի, ու կ'ընդ չէ ազատուած ձեր
յաւիտեանական տիրապետութեանց,
կամ լինեք ազատ աշխատանքի մար-
տիրոսուհի շարունակ մաքառող պո-
նիկ դարձնելու ձգտող ճակատագրի
հետ, եւ շատ քիչ յաջող այդ ճա-
կատագրին, կամ լինել սոսկ ճակա-
տագրին ենթարկվող որքան կ'ընդ
է կեանքի հաճոյքները վայելող, ու
երբ չէ կարելի անպիտան մահով վեր-
ջացնող պոռնիկ...

—Իսկ կուսակրօնուհիները — գի-
տութեան կ'ընդ...
—Նրանք խոտորում բացառութիւն,
սեփական են. ստեղծված այն կա-
նանց կողմից, որոնք յիշածս երեք
փշոտ ճամբաներից եւ ոչ մէկը չեն
ուզեցել ընտրել: Իրանք շաւիղներ
են, ոչ մեծ ճամբաներ: Ահա ֆէմի-
նիստները ամէն կերպ տգիւում են
ճամբայի դարաւոր ցիւխ կողքով մի
կերպ անցնել, է՛հ, Աստուած տայ.
Թերեւս մի բանի հասնեն, մի բան
հնարեն:

ԻՆՊԱՍՏ ՍԱՍՆՈՅ ԵՒ ՏԱՐՆՈՅ
Կ Ա Ր Օ Տ Ե Ա Լ Ն Ե Ր Ո Ւ Ն
—յօ՛ւ—
Կայսր և Սիւրպիոյի

Ն. անեան Եղարթ, 5 ֆրանք Գ. Յ.
Ստրաֆեան 3 ֆր. Ս. իկ Յովհան-
նէսեան 1 ֆր. Ս. իկ Յարութեան
եան, 2 ֆր. Ս. իկ Յովհաննէսեան,
2 ֆր. Յարութեան Գրիգորեան, 1 ֆր.
Պետրոս Վայրանեան, 1 ֆր. Կարա-
պետ Յովհաննէսեան, 1 ֆր. Գ. դա-
սար Պալիկեան 1 ֆր. Սարգիս Գու-
րիկեան, 1 ֆր. Միսակ Տօնիկեան 2
ֆր. Միսակ Յակոբեան, 2 ֆր. Անդ-
րանիկ Սարգիսեան 0. 50 սնի. գու-
մար 22. 50

Մեծ. Տէր Ստրագիր Ե. արժուած
ազգայնաւորագրոյ.

Համ. Կանաւոր թեմաւս ունի առաջին
ցանկը ուղարկելով Ձեզ կը խնդրեմ
որ թմրամտութեան նուիրատուաց
հաճիք հրատարակել թէ այս և թէ
հետզհետեւ խմբագրութեանը ուղարկ-
ուած ցանկերը կանխաւ մատուցա-
նելով չ'որոշուկայութեանցս հաւաստի-
քը մնամ

Սոցիալական Գաղտնի
Վարչական Գաղտնի
8/4 փետր. 1905 Իստիփուս

ՑԱՆԿ ԵՐԿՐՈՐԻ
ԻՆՊԱՍՏ ՍԱՍՆՈՅ ԵՒ ՏԱՐՆՈՅ
Կ Ա Ր Օ Տ Ե Ա Լ Ն Ե Ր Ո Ւ Ն

Կայսրու Սիւրպիոյի և Զ. սոփոյ
Տէր և Տիկին Մարուկեան, 3 ֆր.
Կերովի և Եստիօսեան, 3 ֆր. Գրիգոր
Պոստական, 2 ֆր. Ս. Կարճեան, 2 ֆր.,
Ղազարոս Թորոսեան, 2 ֆր. Սիւրպար
Ա. Եստիօսեան, 2 ֆր. Սիլիկ Սիւրպեան,
2 ֆր. Լեւոն Բաւար, 2 ֆր. Թա-
Յովհաննէս Փափուգեան, 2 ֆր. Թա-
զու Փիլոսոֆեան, 2 ֆր. Գրիգոր Թա-
ւորեան, 1 ֆր. Տէր և Տիկին Մի-

—Դուք ա. գպի. ինքերի շարքից
չէ՞ք:

—Իսկապէս չը գիտեմ. դատելով
այն փաստից որ կ'ընդ ինձ սուսա-
սարակ ստում են. չեմ.

Վիկտորիան խորամանկօրէն ծրա-
տաց շարունակելով այլ մարդկան-
ցից ազատվելու պիտար է. պէտք է
գիտնայ նրանց տնքը որոշել:

—Իայց գուք, ինձ թուում է թէ
գիտե՞ք, զուք ի՞նչու իմ բերնից.
Վիկտորիան իւրազօրէն համաձայ-
նեց:

—Վարժեցիք. երբ պէտք է լինում
մեծ ճամբաները Կարճի շաւիղներով
կարել անցնել, մարդ վարժվում է,
հնարաղէտ է գտնուում կ'ըն եւ մայր
լինել եւ չեմ կարող. բնատուրեան
բնազգը գոյութիւն չունի իմ մէջ,
անհետացած է. ինձ մտաչելի բոլոր
տեսակ աշխատութեանների մէջ տա-
պալվեցի եւ էլ փորձել չեմ ուզում,
յոզեմ եմ:

Երկրորդ ճամբան... գիտե՞ք. մի
շար օր, մի ստոր վայրկի նում,
քիչ մնաց եւ ընկնէի այդ ճամբան
ուզելով ամենքից վրէժ լուծել... բայց
եւ շատ զգուշ եմ, կամքով... գուցէ
կարտութիւնը արգիլեց, Ե. ան
ինձ համար շաւիղ եմ բնտրել եւ այց
շաւղով վազել կ'ըն եւ մոռնի յո-
ծակը, ու նստել եմ այստեղ կ'ընգե-
ցու մկան պէս մի բն եւ նո. նշափ ա-
զատ...

(Շուսուկա կեցի)

